ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՈՒԲՍԻԴԻԱՅԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 09-05-01-02/1

10.02. 2021թ.

ք. Աշտարակ

Կոտայքի մարզպետարանը ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և «Աշտարակի մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն՝ Ա. Հովհակիմյանի որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի N 2215-Ն որոշման կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում իրականացնել հանրակրթական ուսուցման շրջանակներում արտադպրոցական կրթության ուսուցման պարտավորությունը տարեկան 294 սանի համար այսուհետև՝ Ծառայություններ՝ համաձայն կրթական չափորոշիչների:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարված Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Առանց Ծառայությունների արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողի կողմից կատարված Ծառայությունները չեն համապատասխանում սահմանված պահանջներին և (կամ) խախտել է Ծառայությունների կատարման ժամկետը և Ծառայությունները չեն կարող կատարվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում

2.1.3 Չընդունել Ծառայությունների արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին և սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.4 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Կատարողին և հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Ծառայությունների արդյունքը, իսկ Ծառայությունների արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու կատարված Ծառայությունների համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքի:

2.3.2 Մինչև Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 30 օր առաջ տեղեկացնելով Պատվիրատուին:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Ապահովել Ծառայությունների կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցած Ծառայությունների գինը կազմում է 24 867 800 /քսանչորս միլիոն ութ հարյուր վաթսունյոթ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ ծառայությունները մատուցում է 0 % շահույթով: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, այդ թվում հարկերը և այլ պարտադիր վճարները: ..

Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել 2021 թվականի սեպտեմբերի 5-ի դրությամբ խմբերի փաստացի կոմպլեկտավորման արդյունքներով պայմանավորված:

3.2 Պատվիրատուն սույն պայմանագրի 4.1 կետում նշված գումարը Կատ³ողին վճարում է հետևյալ կարգով՝

ա/ մինչև 2021 թվականի նոյեմբեր ամիսը ներառյալ մատուցված ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են միանվագ կարգով, ամսեկան կտրվածքով, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսա 5-րդ աշխատանքային օրը: Ընդ որում յուրաքանչյուր ամիս վճարվող գումարի չափը ներկայացված է սույն պայմանագրի հավելվածում:.

3.3 Պատվիրատուն գումարները վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների որակի և սահմանված պահանջների պահպանման համար:

4.2 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման և 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունները չընդունվելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5%-ի չափով:

4.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Ծառայությունների արժեքի 0,05%-ի չափով: Սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուժացված օրվա համար գանձվում է տույժ Պատվիրատուին հետ վերադարձման ենթակա գումարի 0,05 տոկոսի չափով:

4.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություններ կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից, կամ հանձվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 և 4.3 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

4.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

4.8. Այն դեպքում, երբ 'Գնումների մասին' ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել Պատվիրատուի կրած վնասներն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների ծառայությունի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Սույն պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2021 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը: Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

6.2.Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծարվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսորությամբ սահմանված կարգով՝ սույն

Հավելված N1

«10 » «փետրվարի» 2021թ. կնքված պայմանագրի

<<Աշտարակի մարզադպրոց >> ՊՈԱԿ-ին 2021թ տրամադրվելիք

գումարներնըստամսեկանբացվածքի

N	Ամիսը	Գումարը(հազարդրամ)
1	Հունվար	4824.4
2	Փետրվար	4824.4
3	Մարտ	4824.4
4	Ապրիլ	10 842.4
5	Մայիս	10 842.4
6	Հունիս	10 842.4
7	Հուլիս	17 100.1
8	Օգոստոս	17 100.1
9	Սեպտեմբեր	17 100.1
10	Հոկտեմբեր	24 867.8
11	Նոյեմբեր	24 867.8
12	Դեկտեմբեր	24 867.8

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնիմարզպետարան
Հասցեն՝ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 4
Կենտրոնականգանձապետարան

Հ/Հ________________________________

ՀՎՀՀ 05004247

Գլխավորքարտուղար՝

________________________ Հ. Գևորգյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ Արագածոտնի մարզի
«Աշտարակ մարզադպրոց»ՊՈԱԿ
հ/հ 900448000973
հվհհ 05006002
Հասցեն՝ ք. Աշտարակ

Դպրոցի տնօրեն՝

--------------------Ա. Հովակիմյան
(ստորագրություն)

Կ.Տ.

պայմանագրով նախատեսված գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

6.3.Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը՝ սույն պայմանագրի կողմերից որևէ մեկի առաջարկության առկայության դեպքում պայմանով, որ՝

6.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

6.5 Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի հավելվածը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Արագածոտնի մարզպետարան	ՀՀ Արագածոտնի մարզի
Հասցեն՝ ք. Աշտարակ	«Աշտարակ մարզադպրոց»ՊՈԱԿ
հ/հ 900441090023	հ/հ 900448000973
ՀՀԱրագածոտնի մարզպետարանի	հվհհ 05006002
	Հասցեն՝ ք. Աշտարակ
Գլխավոր քարտուղար	Դպրոցի տնօրեն՝
---------- Գ. Գնորգյան	---------- Ա. Հովակիմյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ